ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի ամբիոնի պետ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության Գիտաուսումնական կենտրոնի դասախոս

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայրենասիրությունը տարբեր ընկալումներ ունի: Չնայած դրան, գրեթե բոլոր հասարակություններում այն մշտապես կարևորվում է և հանդիսանում այն գաղափարական հիմքը, որի վրա կառուցվում են պետության ռազմավարական նպատակադրումները:

Հոգևոր–բարոյական և սոցիալ–քաղաքական գաղափարական ուղղությունների, հոսանքների, մոտեցումների, տեսակետների առկա բազմազանությունը մեր փոխակերպվող հասարակությանն առայժմ թույլ չի տալիս վերջնականապես կողմնորոշվելու դրանց առավել ընդունելի, ռացիոնալ մոդելի ձևավորման և արմատավորման հարցում: Այդ մոդելը պետք է նպաստի հայ հասարակության բոլոր անդամների համաչափ և ներդաշնակ զարգացմանը, նրա լիարժեք ինտեգրմանը քաղաքակիրթ ազգերի հանրությանը՝ միաժամանակ ապահովելով հայկական ինքնության պահպանումը:

Հոդվածում փորձ է արված ուսումնասիրել հայ իրականության մեջ առկա գաղափարական թեզերի փիլիսոփայական հիմքերը, ինչպես նաև հայրենասիրության տեղն ու դերը դրանց համակարգում: Անդրադարձ է կատարվել հասարակության և նրա առավել ակտիվ մասի՝ երիտասարդության հայրենասիրական դաստիարակության սկզբունքներին, ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությանը: Զինծառայության և գիտական աշխատանքի հարուստ փորձի հիման վրա հեղինակները ներկայացրել են հիշյալ հարցերի վերաբերյալ իրենց մոտեցումները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հայրենասիրություն, ազգային արժեք, գաղափարական հիմքեր, ռազմահայրենասիրական դաստիարակություն:

Ժամանակակից աշխարհը թևակոխել է զարգացման այնպիսի մի փուլ, որը ենթադրում է մարդկանց և ամբողջ հասարակությունների մակարդակով շփումների բազմապիսի հարթություններ: Դա անխուսափելիորեն հանգեցնում է հոգևոր–բարոյական, սոցիալ–քաղաքական գաղափարական ուղղությունների, հոսանքների, մոտեցումների, տեսակետների բազմազանության:

Մեր երկրում հասարակության և պետության ժողովրդավարացման գործընթացների ակտիվացումն ու զարգացումը նպաստավոր դաշտ է ապահովում գաղափարական ուղղությունների և հոսանքների մրցակցության համար, ինչը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված գաղափարական բազմակարծության, մարդու և քաղաքա-

ցու մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն արտահայտելու իրավունքներին վերաբերող դրույթներին (ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 7, 26, 27):

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի վերանկախացման առաջին իսկ օրերից առանձին քաղաքական գործիչների և մտավորականության ներկայացուցիչների կողմից առաջ քաշվեց ազգային գաղափարախոսություն ունենալու և դրանով առաջնորդվելու անհրաժեշտության տեսակետը: Նրանց կարծիքով՝ ազգային գաղափարախոսություն ունենալը օրվա հրամայական էր՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության սահմանների երկայնքով և Արցախի շուրջ ծավալվող ռազմաքաղաքական իրադրությամբ, ազգային բանակ կազմավորելու օբյեկտիվ հրատապությամբ: Քաղաքական գործիչների և մտավորականների մյուս խումբը վիճարկում էր համապարփակ (գրված) ազգային գաղափարախոսություն ունենալու անհրաժեշտությունը:

Սրան զուգահեռ արագ տնտեսական վերելք ապահովելու հույսեր էին փայփայվում՝ տնտեսության ազատականացման քաղաքական գծի հիման վրա: Սակայն, ինչպես հայտնի է, ազատ շուկայական հարաբերությունների հիմքում ընկած անհատի անձնական շահը և սեփականության իրավունքը, խեղաթյուրված ընկալման դեպքում, հաճախ ի զորու են խոչընդոտելու ազգային գիտակցության զարթոնքին ու որոշ չափով ստվերելու ազգային արժեքները: Այդ իսկ պատճառով՝ միայն այդ գաղափարով մարդուն և քաղաքացուն դաստիարակելը հակադրության մեջ է մտնում ընդհանուր ազգային շահերի և հասարակության ներդաշնակ զարգացման հետ [1, էջ 20–24, 31]:

1990–ականների սկզբին հասարակության ազգային գիտակցությունը կտրուկ վերելք արձանագրեց և դարձավ հավաքականության և միաբանության նոր խթան: Նույնիսկ կարծիք ձևավորվեց՝ ազգային–ազատագրական շարժման, Հայ Դատի կամ կրոնական (առաքելական) գաղափարախոսություններից որևէ մեկը դնել ազգային գաղափարախոսության բովանդակային հիմքում: Արցախյան ազատամարտով մեծ թափ ստացած ազգային–ազատագրական շարժումն իր հերթին զարկ տվեց Հայ Դատի պահանջատիրական գաղափարի տարածմանը, այնուհետև փորձ արվեց դրանք հարստացնել Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոնեական բարոյագիտական գաղափարախոսական բովանդակությամբ: Արդյունքում՝ այս գաղափարախոսությունները շատերի կողմից սկսեցին ընկալվել գրեթե միասնության մեջ՝ բովանդակությամբ միահյուսված, բայց արտահայտչաձևերով տարբեր: Դա, իր հերթին, պայմանավորված էր Հայաստանի Հանրապետությունում աճող բազմակուսակցականությամբ և տեսակետներ, մոտեցումներ արտահայտելու ազատությամբ (1994թ. հաստատված զինադադարը և 1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունը խթանեցին գաղափարախոսական բազմակարծությունը) [2, էջ 4]:

Ըստ էության՝ առաջացավ ազգային գաղափարախոսության կամ գոնե մեկ միավորող գաղափարի ձևավորման հարցը լուծելու անհրաժեշտություն: Սակայն, այդ իրավիճակում չգտնվեց որևէ պետական կամ հասարակական կառույց կամ քաղաքական ուժ, որն ի զորու լիներ մշակելու գոնե ազգային գաղափարախոսության հայեցակարգային հիմնադրույթները՝ անդրադառնալով հայոց բազմադարյա պատմությանը, պետակա-

նաշինությանն ու ազգային ինքնատիպությանը և ուղղորդելով դրանք ազգի հիմնարար նպատակների իրագործմանը:

Հաջորդ տարիներին որոշակի տեղաշարժի միտում արձանագրվեց գաղափարական արժեհամակարգի ձևավորման հարցում: Դրա համար խթան հանդիսացան, մասնավորապես, մշակութային քաղաքականության և կրթադաստիարակչական ծրագրերի առաջնահերթ գաղափարների ուրվագծումը, որոշակի սոցիալական ծրագրերի իրագործումը, բնակչության բարեկեցության նկատելի աճը: Որոշակի դեր խաղաց նաև ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցի ընդգրկումը [3, էջ 4. 4, էջ 7]:

Թեև գաղափարախոսությունն ընդհանուր առմամբ քաղաքական, իրավական, կրոնական, բարոյագիտական, գեղագիտական գաղափարների ու հայացքների համակարգ է, բայց, օրինակ, մարքսիստական փիլիսոփայության մեջ տարածված է այն կարծիքը, ըստ որի գաղափարախոսությունը և իրականությունը գիտականորեն անհամատեղելի կատեգորիաներ են: Գաղափարախոսությունը դիտվում է որպես սուբյեկտիվ մոտեցումների ամբողջություն, որն արտահայտում է որևէ սոցիալական կամ կրոնական խմբի կամ կուսակցության շահերը [5, էջ 79–80]: Նկատենք սակայն, որ, եթե սոցիալիստական և ազատական գաղափարախոսությունները համամարդկային բնույթ ունեն, այսինքն՝ կարող են կիրառվել անկախ տվյալ հանրության էթնիկական, դավանաբանական, պատմամշակութային արմատներից, կամ այլ խոսքերով՝ որևէ քաղաքակրթությանը պատկանելուց, ապա պահպանողական գաղափարախոսությունը նույնպես կրում է ընդհանուր ճանաչում գտած ազգային–քաղաքակրթական արժեքներ: Գաղափարախոսությունը կարող է կրել ազգայնական բովանդակություն, քանի որ իրենից ներկայացնում է հայեցակարգային գաղափարների հստակ ձևակերպված համալիր՝ ուղղված որոշակի հանրության նկատմամբ մեկ այլ հանրության առավելության կամ իշխող դիրքի հաստատմանը կամ ամրապնդմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ ազգայնական (առավել ևս ազգայնամոլական, որը ազգայնականի խեղաթյուրված և ագրեսիա ծնող տարբերակն է) բովանդակությունից ձերբազատվելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթ նշանակություն պետք է ստանա հայ հասարակությանը միավորելու ունակ կոնկրետ գաղափարի ձևակերպումը, որով ըստ էության պետք է ուրվագծվի մեր երկրի և ժողովրդի աշխարհաքաղաքական, տնտեսական, բարոյագիտական, մշակութային ապագան: Հենց այդ գաղափարն է, որ մեր կարծիքով կարող է բնորոշվել որպես ազգային գաղափար: Այն պետք է հանդիսանա ազգի ռազմավարական նպատակների կամ գերխնդիրների խտացված արտահայտությունը, որոնց լուծմանը ձգտում է ամբողջ ազգը կամ առնվազն դրա մեծամասնությունը [6, էջ 4]: Հստակ ձևակերպված ազգային գաղափարը պետք է ապահովված լինի կյանքի կոչման իրատեսական մեխանիզմներով, տեսանելի պետք է լինեն օգտագործվելիք ուժերը և միջոցները, և ուրվագծված լինեն դրանց գործառույթները: Առաջին հայացքից թվում է, թե այս խնդիրը չափազանց դժվար է լուծել: Գուցե կարելի է ստանալ ազգային գաղափար՝ սինթեզելով կուսակցությունների քաղաքական գաղափարախոսական հիմնադրույթները: Սակայն, մեր կար-

ծիքով, անհնար է արհեստականորեն վերցնել կոնկրետ գաղափարական թեզերը և դնել դրանք մեկ ամբողջական գաղափարական համակարգի հիմքում, առավել ևս, փորձել պարտադրել այն հասարակությանը:

Մեր պատկերացմամբ, ազգային գաղափարի, հետևաբար նաև ազգային ռազմավարության նպատակաուղղվածության, կիրառման ոլորտների և ձևերի ձևակերպման ուղղությամբ աշխատանքներում առաջնային տեղ պետք է զբաղեցնի ՀՀ Սահմանադրության, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ ռազմական դոկտրինի, ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի և այլ ռազմավարական նպատակադրումներ պարունակող իրավական ակտերի ընդհանուր իմաստային բովանդակության համապարփակ վերլուծությունը:

Նշված փաստաթղթերի բովանդակության գաղափարական հենասյուներից է հայրենասիրությունը: Մեր տեսանկյունից՝ անվիճելի է, որ ազգային գաղափարի մոտիվացիոն համակարգում ևս հայրենասիրությունը պետք է առանցքային նշանակություն ունենա:

Հայրենասիրությունը բացատրելու համար պետք է անդրադառնալ Հայրենիքի ընկալմանը: Այն կարելի է բնորոշել որպես տվյալ երկրի հասարակության բնական միջավայրի և սոցիալական տարրերի, այդ թվում՝ լեզվախմբի միավորում (համախմբում): «Հայրենիք» հասկացության մեջ երբեմն երկու բովանդակություն է դրվում՝ փոքր Հայրենիք և մեծ Հայրենիք: Փոքրի տակ հասկացվում է կոնկրետ աշխարհագրական վայրը, որտեղ մարդը ծնվել և մեծացել է,, ձևավորվել են նրա հայացքները սեփական ծննդավայրի և շրջապատող արտաքին միջավայրի վերաբերյալ: Մեծ հայրենիք ասելով, որպես կանոն, հասկացվում է այն պետությունը, ուր ապրում և գործում է մարդը:

«Հայրենիք» հասկացության նման մեկնաբանությունը թերևս հիմնականում համապատասխանում է նաև մեր իրականությանը՝ նկատի ունենալով աշխարհասփյուռ հայության գոյությունը:

Հայրենիքն այսպիսով հայրենասիրության օբյեկտն է, որին ուղղված է հայրենասիրության սուբյեկտների՝ տվյալ երկրի (պետության) հասարակության (քաղաքացիական հանրության) գործունեությունը:

Բնականաբար, հայրենասիրությունը տարբեր ընկալումներ ունի, բայց խտացված, ընդհանրական ձևով այն կարելի է բնորոշել որպես քաղաքական և բարոյագիտական սկզբունք, սոցիալական զգացում, որի բովանդակությունը սերն ու նվիրվածությունն են հայրենիքին, հպարտությունը նրա համար, հարգանքն անցյալի և սրտացավությունը նրա ներկայի և ապագայի նկատմամբ, նրա շահերի առաջնահերթության գիտակցումը և դրանք մշտապես պաշտպանելու պատրաստակամությունը:

Տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բնորոշում հայրենասիրությունը: Նրանց մի մասը գտնում է, որ հայրենասիրությունը հասարակության ազգային շահերի արտահայտություններից է [5, էջ 231]: Ժամանակակից փիլիսոփայության տեսանկյունից՝ հայրենասիրությունը գաղափարախոսություն է և հոգեբանություն, քաղաքականություն է և գործունեություն, նվիրվածություն հայրենիքին: Հոգեբանությունը արտահայտում է սիրո զգացմունքայնությունը հայրենիքի հանդեպ, իսկ գաղափարախոսությունը՝ այդ զգացմունքայնության տեսականորեն հիմնավորված մակարդակը:

Կարելի է առանձնացնել հայրենասիրության երեք բաղադրիչ. 1. Զգաց-

մունքային բաղադրիչը (սերը հայրենիքի հանդեպ). 2. Սոցիալական բաղադրիչը (երբ մարդը կապված է Հայրենիքի հետ ամուր սոցիալական կապերով՝ իրավունքներով, ազատություններով, պարտականություններով). 3. Քաղաքական բաղադրիչը (երբ կենսագործունեության ընթացքում պահպանում է հայրենիքի քաղաքական շահը):

Վերոգրյալի հիման վրա կարելի է առանձնացնել հայրենասիրության հետևյալ զուտ սուբյեկտիվ տարրերը. ա) հայրենասիրական գիտակցությունը (հայրենասիրության կրող հանդիսանալը), բ) հայրենասիրական վերաբերմունքը (գիտակցական հայրենասիրական մոտեցումը, ներգործությունը), գ) հայրենասիրական գործունեությունը (հայրենասիրական նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների կամ արարքների համախումբը, որով դրսևորվում է հայրենասիրական գիտակցությունը) [7, էջ 61,63–64]:

Հայրենասիրությունն ինքնին նաև դաստիարակության միջոց է: Հասարակության արդի հիմնախնդիրներից մեկը իրական, անկեղծ հայրենասիրության արմատավորումն է՝ պահպանելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անհատի, հասարակության և պետության փոխլրացնող օրինական շահերը: Այդ մոտեցումն ուրվագծված է ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ՀՀ ռազմական դոկտրինի բովանդակության մեջ: Այն պետական մարմիններից պահանջում է իրադրության ճիշտ գնահատում, գործողությունների առաջնահերթության որոշում, դրանց իրագործման արդյունավետ, գիտականորեն հիմնավորված մեթոդների մշակում և կիրառում:

Ընդ որում՝ իրական (առարկայական, ոչ լոզունգային) հայրենասիրություն ասելով՝ մեր կարծիքով, պետք է հասկանալ առաջին հերթին սեփական ժողովրդի պատմության և արժեհամակարգի իմացությունը և դրանց նկատմամբ հարգանքը, մշակութային արժեքների նկատմամբ հոգատար, սրտացավ վերաբերմունքը, ինչպես նաև պետության, նրա ռազմավարական նպատակադրումների նկատմամբ տածած հավատը. և այդ ամենն ինչպես գիտակցական մակարդակում, այնպես էլ առօրյա կյանքում:

Շատ երկրներ հայրենասիրական դաստիարակության հիմնահարցի նկատմամբ իրենց մոտեցումներն ու դրա լուծման հիմնական ուղիներն ամրագրել են իրավական ակտերով: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում այս սկզբունքներն իրագործվում են պետական մակարդակով ընդունված «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների հայրենասիրական դաստիարակությունը 2006–2010թթ. ընթացքում» և «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների հայրենասիրական դաստիարակությունը 2011–2015թթ. ընթացքում» պետական ծրագրերի, ինչպես նաև այլ օրենսդրական ակտերի ձևերով [8, էջ 53]: Տեղին է հիշատակել Ֆրանսիայի նախկին նախագահ Շաղլ դը Գոլի մտքերը Ֆրանսիայում հայրենասիրական դաստիարակության մասին. «...Այն սկսվում է ընտանիքից՝ ծնողների կողմից երեխաներին մանրամասն ծանոթացնելով Ֆրանսիայի պատմությանն ու մշակույթին, սերմանելով հպարտություն այդ ազգային արժեքների նկատմամբ» [9, էջ 13]:

Հայրենասիրությունը եղել և մնում է հայ ժողովրդի ինքնության՝ առավել վառ արտահայտված գծերից մեկը, նրա պետականության հիմնադրման և զարգացման ոգեղեն հիմքը: Հայրենասիրության գաղափարները Հայաստանում ծնունդ են առել հայ ժողովրդի ծագման, ձևա-

վորման ակունքներից, ամրացվել քրիստոնեության ընդունմամբ: Պատմության ամենադժվար պահերին, արյունալի իրադրությունների ժամանակ հայերիս համար իրական հայրենասիրությունը ձեռք է բերել միավորող ազգային գաղափարի նշանակություն:

Հայ ժողովրդի հանրային գիտակցության մեջ արմատացել է հայրենասիրության և զինվորական պարտքի գաղափարների գիտակցված միասնությունը:

Զինծառայության ոլորտում դաստիարակչական աշխատանքն իրենից ներկայացնում է զինվորական գործունեության կառավարման գաղափարական և կազմակերպչական միջոցառումների գիտականորեն հիմնավորված համակարգ: Զինված ուժերում անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակությունը կայանում է՝

- հայ ժողովրդի հերոսական անցյալի ու ներկայի՝ ռազմարվեստի ոգով և ավանդույթներով դաստիարակության մեջ.
- պետության վարած ռազմաքաղաքական գծի, նրա զինված ուժերի կառավարման գործընթացների նկատմամբ հավատի մեջ.
- պետության և նրա զինված ուժերի ղեկավարության նկատմամբ վստահության և հարգանքի զգացման մեջ.
- զինված ուժերում իրավախախտումների նկատմամբ անհանդուրժողության և դրանց կանխման ու խափանման մեջ [10, էջ 56]:

Սակայն հաճախ հնչող՝ մահվանը պատրաստ լինելու, մեռնելու (իրականում՝ զոհվելու) պատրաստակամության հայրենասիրական քարոզչական կոչերը, հիմնված որոշակի գաղափարախոսական ուղղությունների («Տարոնականության») և արդի գաղափարական տեսակետների վրա (Տարոնականության և Քրիստոնեական հավատի գաղափարաբանական համադրության՝ ըստ Վ. Գրիչենցի)՝ ուղղված հայրենիքի այսօրվա պաշտպաններին, կարող է թողնել խոր նստվածք նրանց գիտակցության մեջ, խթանելով սթրեսային հոգեբանական վիճակներ նույնիսկ խաղաղ պայմաններում [11, էջ 82]: ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով ամրագրված են դրույթներ (հոդված 13), որոնք պարունակում են զինծառայության պարտականություններ կատարելիս ճակատագրական ելքով հավանականություն: Դրանք այն դեպքերն են, որոնք իմաստավորում են պատմիչ Եղիշեի անմահ խոսքերը. «Մահը չիմացյալ՝ մահ է, մահն իմացյալ՝ անմահություն»: Կարծում ենք, անտեղի է անցկացնել զուգահեռներ հայ զինվորականի և ճապոնացի սամուրայի պատվո վարքականոնների միջև: Հիշենք՝ Բուշիդոյի (ճապոնացի ռազմիկի՝ սամուրայի, պատվո վարքականոն կամ բարոյականության կոդեքս) գլխավոր սկզբունքը. «Սամուրայի ճանապարհը նշանակում է մահ: Ընտրության համար ունես երկու ճանապարհ. անմիջապես ընտրիր այն, որը տանում է դեպի մահ: Իսկական քաջությունն այն է, երբ մեռնում ես, երբ տեղին է ապրելը, և մեռնում ես, երբ տեղին է մեռնելը: Սամուրայը նախ և առաջ մշտապես պետք է հիշի, որ ինքը պարտավոր է մեռնել: Սա է նրա գլխավոր գործը»: Մեկ այլ դրույթ. «Սամուրայը իր կյանքից վեր է գնահատում պատիվն ու հավատարմությունը իր սյուզերենին («տիրոջը»)»: Սակայն սամուրայը պարտավոր է զոհել իր կյանքը հարակիրի կամ սեպպուկու ինքնասպանության ձևերով (որովայնի կամ ստամոքսի հատում) սառնարյուն՝ անտրտունջ տանելով («պատվով») մահը ցանկացած ժամանակ [12, էջ 562–563. 13, էջ 13]: Սա-

մուրայների ռազմաշունչ ոգին կամ «Յամամոտոյի ոգին» երբեք համեմատելի չէ հայոց սպարապետների հայրենասիրական ոգու հետ, քանի որ պաշտամունքի կուռք ծառայող սյոգուն (գլխավոր զորահրամանատար) և արքայազն Տակերու Յամամոտոն հայրասպան և եղբայրասպան անձնավորություն էր, որը ձգտում էր ցուցադրել իր անսահման դաժանությունն ու ագահությունը [14, էջ 66–68]:

Պատերազմների փորձը ցույց է տվել, որ զինավարժ բանակ ունենալը դեռևս հաղթանակի գրավական չէ: Անձնակազմի մասնագիտական պատրաստությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Ուրիշ է, երբ մասնագիտական պատրաստությունը զուգակցվում է հայրենասիրական դաստիարակության, բարձր մարտական–բարոյական և կամային հատկանիշների հետ:

Ելնելով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից, մասնավորապես, հաշվի առնելով ՀՀ անվտանգության դեմ ուղղված արդի սպառնալիքները՝ կարելի է եզրակացնել, որ ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որպես հասարակության հայրենասիրական դաստիարակության բաղադրիչ, վերաբերում է ոչ միայն պետության և հասարակության մաս կազմող զինծառայության ոլորտին: Մեր հասարակության ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացի կատարելագործումը պահանջում է պետության ենթակառուցվածքների ջանքերի ներդրմամբ համալիր միջոցառումների իրականացում: Դրա արդյունքում յուրաքանչյուր զինծառայող պետք է հստակ գիտակցի իր ծառայության և հայրենիքի անվտանգության ապահովման միջև պատճառական կապը:

Սակայն, քանի դեռ հասարակության մեջ չի մշակվել և ժողովրդավարական ուղով չի արմատավորվել ժողովրդին և հասարակությանը կամ առնվազն դրանց մեծ մասին միավորելու ունակ ազգային–պետական գաղափար, զինծառայողների դաստիարակության բովանդակությունը կարող է ներկայացվել միայն առանձին արժեքների և գաղափարական հիմնադրույթների տեսքով:

Այսպիսով՝ ազգային գաղափարը կոչված է խտացված ձևով արտահայտելու հասարակության գլխավոր իղձերն ու ռազմավարական նպատակները, ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, հասարակության առաջընթաց զարգացմանը և ազգերի հավասար ընտանիքում արժանի տեղի զբաղեցմանը: Այժմյան փոխակերպվող հասարակությունում առկա տարբեր գաղափարական ուղղություններից և տեսակետներից ազգային գաղափարի ընտրությունը կամ դրանց հիման վրա նորի ձևավորումը բարդ հիմնախնդիր է, որը, մեր կարծիքով, մոտ ապագայում հազիվ թե կարողանա ստանալ համարժեք լուծում: Ամեն դեպքում, ազգային գաղափարի հիմնասյուներից մեկը պետք է հանդիսանա հայրենասիրությունը: Դրա հիման վրա պետք է նաև ձևավորվի հասարակության ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 14.11.2012 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Մարգարյան,** ... «Ժամանակը սպանում է միայն ուժեղներին» / Հայ զինվոր, թիվ 15, 19–25.04.2012 թ., 15 էջ:
2. **Ա. Յալանուզյան,** Ազգ և գաղափարախոսություն / Հայ զինվոր, թիվ 15, 12–19.04.1997 թ., 15 էջ:
3. Գաղափարադաստիարակչական պատրաստության և հասարակական–պետական պատրաստության ձեռնարկ: / ՀՀ ՊՆ. Երևան, 2010 թ., 232 էջ:
4. **Գ. Պողոսյան,** Ազգային գաղափարախոսության հենասյուները / Հայ զինվոր, թիվ 10, 15–21.03.2012 թ., 15 էջ:
5. **Գ. Պողոսյան,** Մեր ապագայի ուղեկիցները / Հայ զինվոր, թիվ 13, 05–11.04.2012 թ., 15 էջ:
6. **Է. Դանիելյան** և ուրիշներ, Հայրենիք և ծառայություն // Ուսումնական ձեռնարկ. ՀՀ ՊՆ. Երևան, 2001 թ., 576 էջ:
7. **Հ. Մադոյան,** Մահվանը սիրահարված / Հայ զինվոր, թիվ 2, 16–25.01.2012 թ., 15 էջ:
8. Միջազգային գիտաժողով. «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ)» // Ամփոփումներ: Երևան, ՀՊՄՀ, 16–17.04.2012 թ., 108 էջ:
9. **Վ. Գրիչենց,** Հայ ազգային գաղափարախոսություն. Հայոց ազգային բանակի հզորության գրավական / Երևան, Հենակետ» ՓԲԸ տպարան, 2011 թ., 99 էջ:
10. Փիլիսոփայական բառարան / Երևան, «Հայաստան», 1975 թ., 467 էջ:
11. Вестник границы России / Вып. 2, март–апрель 2007. – 80 с.
12. Военная мысль / №5, май 2012 г. –80 с.
13. Военная мысль / № 6, июнь 2012 г. – 80 с.
14. **Сармакешян Г., Геворкян З., Мирзоян Т.** Государство должно стать маяком для каждого армянина. / Голос Армении, №48, 05.05.2012 г.– 8 с.

ПАТРИОТИЗМ В СИСТЕМЕ ИДЕЙНЫХ ОСНОВ ТРАНСФОРМИРУЮЩЕГОСЯ ОБЩЕСТВА

АСЛАНЯН АШОТ

Начальник кафедры научно–учебного центра Службы национальной безопасности РА, кандидат технических наук.

ХАЧАТРЯН ГАГИК

Преподаватель научно–учебного центра Службы национальной безопасности РА

Патриотизм воспринимается по–разному. Он всегда важен почти во всех общественных образованиях и является тем идеологическим базисом, на котором государство строит свои стратегические цели.

Наше трансформирущееся общество пока не в состоянии среди множества существующих духовно–нравственных и социально–политических идеологических направлений и течений окончательно сориентироваться в формировании и укоренении его наиболее приемлемой, рациональной модели. Эта модель должна содействовать равномерному и гармоничному развитию всего армянского общества, а также его полноценной интеграции в сообщество цивилизованных наций без потери армянской национальной самоидентичности.

В настоящей статье сделана попытка изучить существующие в армянской действительности философские подходы к идеологическим основам воспитания общества, а также роль и место патриотизма и патриотического воспитания в контексте этих воззрений. Отражены принципы и особая значимость военно–патриотического воспитания наиболее активной части общества – молодежи.

Дата представления статьи: 14.11.2012 г.

PATRIOTIZM IN THE SYSTEM OF IDEOLOGICAL BASIS OF TRANSFORMING SOCIEITY

ASHOT ASLANYAN

Chief of the Chair of Scientific–Educational Centre of SNS of RA,
PhD in Technical Sciences

GAGIK KHACHATRYAN

Lecturer of Scientific–Educational Centre of SNS of RA

Patriotism is perceived differently. It is always important and it is the ideological basis on which the state builds its strategic goals. Our transforming society is not in a state of many existing spiritual and moral, social and political ideological trends and tendencies have finally sorted out the formation and establishment of its most affordable, efficient model. This model should facilitate a uniform and harmonious development of the whole Armenian society and its full integration into the community of civilized nations, without the loss of Armenian national identity.

This article attempts to study philosophical approaches of ideological foundations of educating the society, the role and place of patriotism, as well as patriotic education in the context of these views. The article reflects the principles and particular importance of the military–patriotic education of the most active part of the society – the youth.

Article submission date 14.11.2012